ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2014թ. N 805-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Սննդամթերքի տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանի և մականշվածքի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 68 որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 2-րդ կետի 5-րդ ենթակետում «սննդամթերքի վրա» բառերը փոխարինել «այն սննդամթերքի վրա, որի մականշվածքում կամ տարայի վրա առկա է տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշան (այսուհետ՝ նշան)» բառերով.

2) 4-րդ կետի երկրորդ պարբերությունը «միևնույն արտադրողի» բառերից հետո լրացնել «կամ ներմուծողի» բառերով.

3) 5-րդ կետը «փաթեթավորող» բառից հետո լրացնել «կամ ներմուծող (որի կողմից ներմուծվող սննդամթերքի մականշվածքում բացակայում է սույն կանոնակարգի 2-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը)» բառերով.

4) 7-րդ կետի առաջին, երրորդ և չորրորդ պարբերությունները «փաթեթավորող» բառից հետո լրացնել «կամ ներմուծող (որի կողմից ներմուծվող սննդամթերքի մականշվածքում բացակայում է սույն կանոնակարգի 2-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը)» բառերով.

5) 9-րդ կետը «փաստաթղթում» բառից հետո լրացնել «և սերտիֆիկացնող մարմնի կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատում» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ